

ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻշողՈՒԹԻՒՆԵՐ *

Ը

Ժամասիրութիւնը, աղօթասիրութիւնը լատուկ էր, մասաւանդ ան ժամանակներումը, հայ զաղթական ժողովրդեան, Նոյն իսկ հասարակ օրերում, եկեղեցին միշտ վիքո՞ն էր վինում աղօթաւորներով երկու իսկ սեռից, ևս և մանուկներից. Անշոշտ ժամասիրութեան արդիւնք է, որ գաւառացի ամեն մի հայ մարդ եկեղեցու գրեթէ բոլոր ժամասացութիւնը անգիր է իմանում և, կամացուկ ձախով, ձախակցում է նողեոր պաշտօնեաներին:

Ժամանակի ոգւոն համեմատ՝ ընթանում էր և մեր ընտանիքի կեանքը. — Մինչև հօրս վաղճանուելն՝ ես դեռ չեմ վիշում մի երեկու, երբ մենք «Ակեսցէ» կամ ըստ ժամագրի «Հանգստեան Աստուածաշտութեան կարղը» չասէինք թէ գիւղում և թէ քաղաքներում ապրած ժամանակներս. Քահանակի սակլի մաղթանքներն, աղօթքներն և աւեարանի ընթերցումը հալրս էր կատարում, իսկ մայրս, քոյքրս, նղաալրներս և ես՝ փոխերն ու շարականներն էինք ասում. Սրանի այդ ժամանակներին....

Խըրեւ ժամկոչ՝ հալրս ամեն մի ժամասացութեան ժամանակի, ի հարկէ, եկեղեցումը պէտք է լինէր: Իացի ձմեռակին զաժան օրերից՝ զրեթէ ամեն առաւօտ ես էլ հօրս հետ զընում էի: Իսկ Արեկոները՝ զպրոցից զարձեալ եկեղեցի էի մանում և ժամերգութիւնը վիրջանալուց լետով՝ հօրս հետ տուն զնում: Ակեղեցուց միշտ անպակաս դժնուելով՝ ես երբեմն հօրս սգնում էլ էի, ինչ բանի որ կարող էի և ձեռնահաս: Օրինակ՝ եկեղեցին, երբեմն, ես ինքս էի մաքրում, աւելում: Այդ պաշտօնը ես մեծ սիրով և ուրախութեամբ էի կատարում այն ժամանակն և եթ, երբ հալրս ժամումն էր լինում և իւր աթոռի վրա նստած ինձ ցոյց էր տալս մաքրելու ձևերն ու տեղերը, իսկ երբ հալրս երբեմն ստիպուած էր լինում ինձ մենակ թողնել եկեղեցում իմ դրութիւնը անտանելի էր դառնում: Եւ 5—10 ըոպէի զործը՝ հաղիւ կարողանում էի $\frac{1}{2}$ և $\frac{2}{3}$ ժամում աւարտել: Եւ դորա համար էւ

Հըրենմի, հօրս կողմից նկատողութեան էի ենթարկւում։ Դորա պատճառում ալս էր.

Ս. Խաչ եկեղեցում երկու պատկեր կար աջակողմեան պատից կախած։ Մինը՝ ս. Դէորդի, միւսը՝ վերջին դատաս։ տանի, — երկուքն էլ միանդամաւն անճոռնի և առանց ճաշակի նկարուած։ Ս. Դէորդի դաժան, զարալից զէմքը, նորա զրանապատ մարմինը՝ մի ձեռքում բռնած վահանը, միւսում սիղակը, նորա, ոտքերի տ. կ գալարուած սոսկալի վիշապը և ոռլա բերանից ժալթքած արեան ճապաղիքները՝ ինձ սոսկում էին պատճառում ամեն անդամ երբ ես արդ պատկերի վրան էի նայում երբեմն, ոտքն իսկ ժամերգութեանց ժամանակ, աղօթաւորների ներկալութեամբ։

Ս. Դէորդի պատկերից ոչ պակաս սոսկալի էր վերջին զատաստանի պատկերը։ Դժոխքի բոցեր, հրեշտակներ և սատանաներ, դացա պատերազմը, մերկ մարդիկի, որոց մազերիցը բանոտած՝ սատանաները դէսի դժոխքն են քաշ տալիս, մարդի վլներից կախ ընկած նոցա կրծքերին կպած մանոկներ, զերևալմաններից դուրս ելած մարդկալին կմախքներ, չըրերի անդունդներից, զաղանների փորերից դուրս ելնող մարդիկ և ալլն և ալլն։

Երկու պատկերն ես Արագովա զիւղում ապրող մի արդաշած դպրի թէ սարկաւագի նկարչական հանճարի արդիւնքն էին։ Աս նկարիչը, որին ես շատ անգամ տեսած եմ, կարնու գաղթականներիցն էր նոյնպէս և եկեղեցական նըկարչութեամբ էր պարապում միշտ և նորանոլ էլ ասլրում*), Ալլդ նկարչի ստեղծագործութեան ծեփուածքներով լցուած են Արագովակի նկեղեցու ամբողջ պատերն, որոց ուխտի և երկրպագութեան էին զնում հաղարաւոր գիւղացիների կանաչք մանաւանդ։ Ալդ ծեփածոլ հրեշներից նկեղեցին մաքրելու համար, Խորէն վլ. Ստեփիանէն, Ախալցխալի լաջորդ եկած ժամանակ, փորձ էր փորձել։ Բայց իրան լատուկ ոգեսրութեամբ և անտակսութեամբ, լոնքը դրստելու տեղ, աչքն էլ էր հանել...։

*). Պատմութիւնից լայտնի է, որ մեր մի քանի վանքերում, առաւելապէս ջաթեամ, միարաւնները, ի թիւս այլ աքուասների, եկեղեցական նկարչութեամբ ևս պարապում էին նրանի թէ ալժմ ևս, դոնէ ս. Էջմիածնում, վերսկառէր արդ սոսիրութիւնը, որով Մալլը Աթոռը մնաւած կըշանուէր նիթապէս և բարուատէս նոկ եթէ եկեղեցական անօթներ, դղեսաներ, մոմեր, մինչև իսկ նշխարքի տիպարներ պատրաստեն և կարելի լինէր. ս. Էջմիածնում կատարել. — այն ժամանակի բացի այն, որ մեր եկեղեցիներում միօրինակութիւն և ներդաշնակութիւն կախէր տիրել, այլ և բաւականին զրամական արդիւնք կընալթհայթուէր յօդուա վանքին, որ ցարդ, ինչպէս հարկն է, չէ կարող օգտուել, ինչպէս իր անշարժ կալուածքներից, նմանապէս և այս և սրա նման վակելուշ և օրէնքով թուլատրելի նորանոր ձեռնարկութիւններից Յալտնի է թէ նուռաստանի մի քանի վանքելն ու կուսանցքներն ինչ ահազին արդինք են սուանում եկեղեցական անօթներ, դղեստեներ և պատկերներ վաճառելուց։

Նրբ ես ստիպուած էի լինում առանց հօրս՝ աւելել եկեղեցին՝ լանկարծ, և բոլորովին լակամալից, աչքերո ընկնում էին ալդ պատկերների, կամ նոցա մէկի կամ միւսի վերալ, և երկիւղից սիրոս ճաքում էր. Աւելը ձեռիւ իսկոյն դուրս էի վախչում և եկեղեցու գաւթում աշքերս մի մարդ, կամ մի աշակերտ էին պառում: Չտեսնելով ոչ ոքի, ես, սրտի տագնապով, նորից ներս էի մտնում, Եւ էլի դուրս փախչում, էլի ներս մտնում, շարունակ մի քանի անգամ: Դրութիւնս ծնողաց լայտնելու սիրտ չէի անում սկզբներում, որովհետեւ մի զգացում, մի ներքին անբացատրելի ձայն կարծես ինձ ասում էր՝ «եկեղեցոց, նորա պատկերներից երկիւղ կրելը մեղքէ, լանցանք է—թէ՝ ալզպիսի զանգսատ անելը, նոյն խոկ հարազատ ծնողին, կարելի չէ, թէ՝ դորանով անպատճառ ես իմ ծնողաց զալրութը կը շարժեմ և անշուշտ կը պատժուեմ: Մանաւանդ որ, դիրոցում արածս անկարգութեան պատճառաւ՝ ես արդէն, բաց ի տէր Այմօնի փալախքալից, հօրս կողմից էլ լաւ ապատկուեցալ, քացիներ կերաւ, Դորանով ես չբաւականացած՝ մալրս իւր հերթում, իմ բերնի մէջ մի բռու կարմիր տաքոնեղ ածեց, որպէս զի սովորեմ իմ մանկան մաքուր բերանը՝ միւս անդամ ափեղցինեղ բառերով չկեղաստել:

Բայց եթէ ես իմ դրութիւնը հօրիցու ծածկում էի, դէպքը ինքն իրան բաց աւաւ:

Մի օր, երբ ես, ըստ սովորականին, եկեղեցոց դուրս էի փախչում դւան շէմքի վրալ՝ հօրս կպալ լանկարծ, որ ալդ բոպէին ներս էր մտնում: Տեսնելով իմ գունատութիւնը և կատարածս դործի թերութիւնը՝ հայրս պատճառը հարցրեց:

—Վախենում եմ, պատասխանեղի ես:

—Ո, միից:

—Ա՛լ, ալս պատկերներից:

—Ա՛լ տղալ, զու կատարեալ սարսախ ես: Միթէ մարդամի պատկերներից էլ կը վախենալ:

—Գիտեմ որ չի վախենալ, բայց ես վախենում եմ:

—Ծն սարսախ, վախենալու ալսոել ինչ կալ: Ահա եկ տես, Եւ հայրս ձեռքից բռնած դէպ ի պատկերները տարաւ ինձ, Նորա ձեռքը պինդ բռնած՝ ես կիսաերկիւղ առաջ էի գնում:

—Սա ս. Գէորդ գօրավարն է, սա վիշապն է. հըմ, ինչի ես դողդողում, սա հօ իսկական վիշապ չէ: Սա էլ՝ սուս նիղակ է, ալս կարմիրն էլ որ կալ, հօ իսկական արիւն չէր ալլ չորացած ներկ է. ալ, տես քսեցի և ձեռքիս վերալ ոչինչ չկալ: Սա Գարբիէլ հեշտակապեան է, սա Միքայէլն է, սա Բելիարն է, սա՝ Սաղարէլը: Սրանք արդար մարդիկն են, սրանք մեղաւորները... ալսպէս բացատրում էր ինձ հայրս և ձեռքը անդաղար քսում պատկերների վերալ, ինձ էլ հար-

կաղըում էր, որ ես էլ քսեմ և ես էլ քսում էի, ևս մինչեւ անդամ իմ մատը՝ վիշապի բերանի և գծոմքի բոցերի մէջ կոխեցի և անձամբ համոզուեցալ, որ զոցանից երկուղ չկար, Այդ օրից սկսեալ վիշեալ պատկերներիցը ես ալ ես չէի վախենում, թէպէտ ալս ես պէտք է ասեմ, որ ժամի մաքրելու ժամանակ՝ հայր աշունեան ինձ միալնակ չէր էլ թողնում:

Բ

Հիտեալ տարին մեր զպրոցում մի նոր ուսուցիչ ես ամեացաւ և զպրոցի ծրագիրը մեծ փոփոխութեան և նթարկուեց, Մինչև այդ տարին թուաբանութիւնից սովորեցնում էին միմիայն առաջին և զործորութիւնները. ալժմ ամբողջ թուաբանութիւնը սկսեցին աւանդել, Կրօնազիտութեան անոնվ միմիայն ազօթքներ էինք սովորում և Աստուածացունչ կարդում ցարդ, այնուհեան ծրագրի մէջ մտաւ նաև Սրբազնն և Հարոց պատմութիւնն ևս Հարոց լեզու ասելով՝ մինք միմիայն դրաբար զրքեր էինք կարդում և արտադրում. հիմա ծրագրի մէջ մտան քերականութիւն և ճարտասանութիւն և թելաղրութիւն ու շարադրութիւնն էրգեցողութիւնը ընդարձակուեցաւ և սկսեցական երգերի հետ մտան նաև տաղեր և ժողովրդական երգեր. Մի նոր առարկալ ես աւելացաւ, — Ռուսաց լեզուն, Ար խօսքով Ախալքալակի դպրոցը՝ կատարեալ վիրանորոգութեան ենթարկուեց, թէ ծրագրով և թէ նոր ձեր ձեր նստարաններով ու շինութեան կարկատաններով ու ինչ ինչ փոփոխութիւններով, Նախկին ուսուցիչները թէ և մնացին, սակայն նոցա զործունէութիւնը նսեմացաւ նոր վարժապետի զործունէութեան առաջ, Դա Ճօնական վարժապետ Տէր Ղաղարեանցն էր՝ Ախալքալակի մտակալ, կարծեմ, Զան դուրս դիւղից, որ սկել էր Տփխիսից, Ներսիսեան զպրանոցից, Երկար տարիներից լետով ես ալն եղրակացութեան սկալ, որ Ախալքալակի դպրոցի նոր ծրագիրը մեծ մասամբ, աւելի ձեական էր քան էական, որ առարկաների մեծ մասը՝ զարձեալ մեքենաբօրէն էին աւանդում. ոչ թէ մնասկ հին ուսուցիչները, ալ նոյն ինքն Տէր Ղաղարեանցը, սակայն անկարելի է ժխանել, որ վերջնիս մուտքործելն՝ Ախալքալակի դպրոցում, զարաղլում պէտք էր համարել. Առաջին անգամ աշակերտներս նորա օրով և նորանով տեսանք, որ ուստցիչը կարող է, և պէտք է, աշակերտների հետ քաղցրութեամբ վարուի, նոցա հարցմունքները սիրով լսէ և սիրով էլ պատասխանէ, բացատրէ, աշակերտների մօտ ժպտի, ծիծաղի և աշակերտների ծիծաղելն էլ աւանցանք չհամարէ, չպատժէ, մինչև անգամ աշակերտների հետ, և նոցա հաւասար խաղ անէ զաւթումը, նորանոր խաղեր սովորեցնէ նոցա, ինչպէս որ այդ ամենը անում էր Ճօնական հարաց

վարժապետը։ Եւ, հետեաբար, նա մեր ամենքիս սիրելին դարձաւ հէնց սկզբից ծշմարիտ է, նորա օրովան էլ՝ թաթը, փաւախքան չի բացացաւ դպրոցում, բայց այդ պատիժներն իրանց սովորականութիւնն ու դաժանութիւնը ալլ ևս չունէին։ Տէր Պաղարեանցը վայելչակալմ, գեղեցիկ, աշխորժ ու վառվառն մի երիտասարդ էր Զալնը՝ շատ և շատ դիւրեկան։ Լաւ էլ երգում էր, Դասի ժամանակ երբեմն նա մեղ Թիֆլիզի և Ներսիսեան դպրոցի մասին տեղեկութիւններ էր հաղորդում և մեծ լափշտակութեամբ նկարազրում թատերական մի ներկայացումն, որ դպրանցի աշակերտաներն, ինքն էլ նոցա հետ, մի անդամ տուել են։ Դա պէտք է որ կարինեանցի «Հուշանիկը» լինի, Դոնէ Վարդան Մամիկոնեանը, նորա խրոխախոսքերն ու ձեերն՝ ի դէմս Տօնական վարժապետին՝ մենք տեսնում ու լսում էինք առաջին անդամ։ Անքան մեծ էր մեր ոգեսրութիւնը, որ Վարդան Մամիկոնեանցին մինչև իսկ մեր շարադրութեանց նիւթ էլ շինեցինք մի երկու անդամ։

1870 թուականներում, երբ ես, առաջն անդամ ծանօթացաւ Դ. Աղալեանցին և մի քանի անդամ ներկալ եղաւ նորա աւանդած դասերին Ախացիսալի հովեր դպրոցում՝ զարմանալի նմանութիւն դատ նորա և իմ մանկական ուսուցիչ Տօնական Տէր Պաղարեանցի հետ Մի և նոյն հաւատը, մի և նոյն աշխուժութիւնը, մի և նոյն հաւատը և սէրը թէ դէս ի աւանդուած առարկան և թէ դէս ի աշակերտաները։ Ե՞ւ, —խօսքը մեր մէջ մնալ, —մի և նոյն խելքի զօռ տալը, ծալրակեղութիւնը։ Անտարակուս Դ. Աղալեանցը իւր զարդացմամբ և իւր աշխարհակեցողութեամբ՝ անհամեմատ բարձր էր Տէր Պաղարեանցից, բայց դոցա երկուսի աւանդման ձեերը, դոցա զգացմունքները, դոցա ողին նոյն էին, ինչպէս կիսած խնձորի երկու կառըներ, իրք Վարատանի և Խմերեթի թեմի եկեղեցական ծխական դպրոցների թեմական տեսուչ երբ 1891 թ. աշնանը՝ առաջին անդամ ալցելեցի Կախէթի Վելիսիխէ դիւղի դպրոցին։ Նախասենեկում ինձ դիմաւորեց մի ալեղարդ քահանակ, որ թէ ժաղում էր և թէ, կարծես, արտասուել էր ուղում ևնձ լայտնի էր, որ Վելիսիխէ դըպրոցի ուսուցիչների թւում մի կրօնուսոց քահանակ, կար Ուատի հարցը՝ Եղիչէ քահանակ Տէր Պաղարեանցը զուք էք, տէր հալրու—Ալր, հալր տեսուչ, պատասխանեց քահանան և... աշքերում զսպուած արտասունքները գլորուեցան ալտերն ի վալր, նև ալլալուեցալ, բայց պաշտօնականութիւնը ձեռքից չթօղի։

—Բանի աարի է, որ դուք քահանակ էք,

Մերունին պատասխանեց, բայց... լալագին ձախով։

—Տէր հալր, ո՞յ տեղացի էք։

—Ախալքալակցի։

—Գօրուակ Ախալքալակը։

—Ոչ, Զաւախէթի Ախալքալակը, Ախացիսալի մօտ։

Սիրտս սկսեց թրթռալու Հարցմունքներս արագացրի:

—Տէր հալր, աշխարհական ժամանակ՝ ձեր անունն ընչ էր:

—Տօնական, հալր տեսուչ:

—Տօնական վարժապետ Տէր Ղաղարեանց...

—Ալր, հալր տեսուչ:

—Ոչ, ոչ տեսուչ, այլ Ձեր աշակերտը՝ Յովակիմ Գեղամեանց:

Նև մենք դրկախառնուեցինք, համբուրուեցինք, ուրախ արտասուեցինք: Արտանց ցաւում էի, որ այս զէպ-քում, ինձ, փոքրիս վիճակուած էր Յովսէփի լինել, իսկ իմ մեծին, ուսուցչին՝ Բենիամին: «Քեզ պարս էր աճիլ և ինձ մեղմանալ, պատախաննեց իմ նախկին սիրելի ուսուցիչը և, վերջապէս, թողլ տուեց, որ ձեռքերը համբուրեմ: Նորա պատմածները, իւր զլսովն անցկացած չար ու բարիների մասին, կնոջ մահը, հալաշատ Զաւախքից՝ սակաւահալ և վիրախօս կախէթի մի անկիւն ընկնելն և ալլն—վերին աստիճանի ցաւալին և լուզիչ էին: Սակայն, տէր հալրը՝ ախոռ ամենալին՝ շատ զո՞ն էր, որ սրբ: Արիստակէսը, որի առաջնորդութեան օրովն էր տեղի ունեցել իւր տեղափոխութիւնը, հովանաւորել և խնամարկել էր իրան:

Փ

Տէր Ղաղարեանցի ուսուցչութիւնը մի գեղեցիկ և նոր երսովիթ ևս առաջ բերեց հասարակութեան մէջ: Ճողովուրդը, որ սկզբում դպրոցալին կեանքով, կարծես, չէր հետաքըրքուում, գոնէ դպրոցի շէմքից ներս չէր մտնում, ախոռնետն սկսեց թաճախել դպրոց: Թաճախ պատահում էր, որ ծնողները դալիս էին դպրոց և իրանց զաւակների մասին խօսում, խորհրդակցում վարժապետների, առաւելապէս Տէր Ղաղարեանցի հետ: Եւ լետով նստում էին և աշակերտների հետ նորա աւանդած զամերը լսում մնե հետաքըրքութեամբ: Դըպրոցից դուրս գալիս՝ նոքա իրանց լսածներն անշուշտ պատմում էին փողոցներում կամ տներում ուրիշներին և սոքա էլլ իրանց ենթում, միւսներին: Եւ ալսպիսով մներ դպրոցը մի տեսակ փոքրիկ ուխտատեղի և ժողովրդալին դպրոց էր զառնում հասարակութեան համար: Հէնց Տէր Ղաղարեանցի ժամանակիցն սկսուեցաւ և այն երսովթը, որ շրջակալ գիւղերի երիտասարդ և նոյն իսկ տարիքաւոր տիրացուներ՝ զալիս էին և ուսում ստանում դպրոցի մի առանձին սենեկում: Եւ երբեմն էլ՝ միանում էին մեզ, աշակերտներիս հետ: Ալնքան մեծ հաշակ էր հանել մեր դպրոցը, որ վիճակի հեռաւոր գիւղերի ուսումնական տէրտէրներն անդամ զալիս էին երբեմն տօնական վարժապետին տեսնելու, նորանից սովորելու: Ալդպիսի քահանաներից մէկն էր Օրճա գիւղի տէր Դաւիթը, ո-

րի համար ասում էին թէ՝ Կարսի մէջ էլ մեծ համբաւ է վախզիտ և զել Սի օր, երբ Տօնական վարժապետը, իւր սովորական, ոգևորութեամբ, Հայոց պատմութեան դաս էր աւանձ դում մող, մի կարճահասակ՝ Նիշար և ալեխառն քահանակ ներս մտաւ, անթի տակ մի կապոց բռնած. Ողջունեց, Ամենքս կանգնեցանք, «Դիշուն հարաւո՞ւն եկն լսել դիմաստութիւն Սողոմօնիո—ասաց օրճացի տէր Դաւիթը և կապոցը Տօնական վարժապետի առաջը դրեց և եկաւ մեր կողքին նստեց. Դասը շարունակուեց և վերջացաւ. Քահանան ու Տէր Ղաղարիանցը առանձնացան, Բետոյ մենք տեղեկացանք, որ տէր Դաւիթը իւր մի դիւցազներդական դրուած քը՝ քերել էր մեր վարժապետին ցոլց առալու. —Աերջինս էլ մի քանի թերթ մեր ներկայութեամբն ևս կարդաց. —Գրուած քը գրաբառ էր, լանդաւոր և, բայ Շնորհալու, ամեն մի բառ միենուն տառիքն էր սկսում. Օրինակ՝ «Վառ վառեալ վառվառական վառվառման» . . . ալժմ մոռացել եմ, բայց այն ժամանակ տասնեակ տողեր անդիր էին արել մեղանից շատերը.

Խալիպեան դպրոցում մի անգամ Կոմիտաս Բաղրատունու «Հայկ դիւցազն» կարդալիմ երբ պատահեցալ Հայ Հոմերոսի ալս տողին՝ աճօնէր ճոկանն ճապուկ, ճախր ի ճակատըն ճոմելով» լանկարծ միտս ընկաւ Օրճացի Հօմերոսի պառվառեալ վառվառական» . . .

1892 թուին՝ Սխալքալակի դնալիս արածս հարց ու փորձերից երեցաւ, որ Օրճացի տէր Դաւիթը վախճանուած էր և սկ նորա դիւցազներդութեան գոյութեան մասին տեղեկութիւն չունէր գոնէ իմ հարցրած մարդիկը. Ավանա.

ԺԱ

Ախալքալակի դպրոցի երգեցողութեան ուսուցիչը՝ Կարապետ վաժապետ Սեծատունեանցն էր, որի ձախը, ինչպէս այն ժամանակն էինք ասում, «զլիսիցն աէր—տէնօր», Նորակաղմած և կեղեցական երգեցիկ խմբի մէջ՝ Տօնական վարժապետը վերջերում մոցրեց՝ ուրիշ երեք աշակերտների հետ նաև ինձ. և երգեցողութեան ուսուցչի հետ միասին՝ նա ինքը սովորեցրեց մեղ «Թագաւոր յալիտեան» երդը, որ Հաղասաւանեաց եկեղեցին երգում է նշանաւոր սրբերի տօներին. Մեղանից առաջ էլ ադ երդը, ի հարկէ, երգում էին և ուրիշները, բայց ողջ քաղաքը ասում էր, որ Տէր Ղաղարիանցի սովորեցրած ալդ երդի նոր եղանակը, երգիչների միատեսակ և մետաքսեակ շապիկները շատ և շատ գեղեցիկ է և ներկաշնակի Արդ էր պատճառը, որ մեր երգած «Թագաւոր յաւետեան»-ի ժամանակ՝ ս. 1աչ եկեղեցում. ասեղ ձգելու տեղ չէր լինում, ջնալած, որ ժամերգութիւնը սկսում էր շատ վաղո և կամակ մթիր ժամանակ. Մեր խմբի մէջ կար մի աշակերտ, կարապետ Մարգարեանց անունով, որ զժքաղդա-

բար, միշտ ուրիշներից ուշ էր գալիս, Ուստի շուտ եկողներու՝ շատ անդամ՝ խմբովին զնում էինք նոյս գուռը թակում, զարթեցնում և բերում ։ Թագաւոր լաւիտեանո-ին հասցնում, — Մարդարեանցի ձախն՝ մեր բոլորի ձախներիցը լաւ էր, նա մեր խմբի պատկն էր, Ուստի առանց նորան երգելը, — նշանակում էր կոտրել մեր խմբի անունը, — անուն որ ողջ քաղաքի մէջ պատիւ և համբաւ էր վայելում:

Բայց եթէ եկեղեցական երգերի պաշար մնաք քիչ ու նէինք, աշխարհիկ երգերի պաշարներս, բնդ հակառակը, շատ շատ էր, և ի չնորհս ալդ երգերի՝ մեր խումբը Ախալքալակի և ապա Ախալցխալի գրեթէ ամեն մի հարուսափ նշան տուէքին, հարսանիքին և պաշտօնական խնճուքներին միշտ պէտք է հրաւիրուէր: — Բայցի մեղնից՝ վինում էին և սաղանդարներ Սակախն նոքա առաւելավլս պարերի եղանակներ էին ածում: Արսպիտով մեր խումբը՝ ազգալին ժողովրդական երգերի տարածիչ էր հանդիսանում հասարակութեան մէջ:

Զգիտեմ մեզ հրաւիրողները՝ զգրոցին կամ եկեղեցուն որնէ վճար տալիս էին թէ ոչ, Բայց ալս լավոնի է, որ մենք, երգիշներս վարձատրում էինք դասագրքերով, ինտուրեալ զրիշերի տիերով, ժամաշապիկներով, դիխարկ ու կօշիկներով և շորերով. Անվարծ երգում էր միմիալն կարապետ Վարդարեանցը, «րովետե նա ալդ բաներին կարիք չունէր, նորա հալրը, Մարտիրոս աղան, քաղաքի առաջնակարդ իշխանն էր և ապրում էր մի ալնախիչ շքեղ ու սեպհական տան մէջ, որ ալն ժամանակուալ համար կատարեալ պալատ էր»:

Ազմենան հարուստները՝ հասարակ ժողովրդից իրանց հեռու են պահում, և իրանց որդուց համար նուաստութիւն են համարում: աղքատ երեխաների հետ ընկերակաները, Այդպէս չէր 40—50 տարի առաջ:

ԺԲ

Ազաջին անդամ մեր երգեցի խումբը Աւետիս Բօղովեանցի տունը մուտք զորեց մի պաշտօնական ճաշկերովթի տաթիւ, որ ալդ պարոնը, իրու գաւառապետ, տալիս էր գաւառի ամեն մի զասի ներկալացուցիչներին՝ Սելվաստապօլի մօտ Ռուսաց տարած լաղթութեան առթիւ: — Ռուս և ստիճանաւորներ էլ կարին, Խմբի զեկավարը՝ ալս անդամ ինքը Մեծատունեանցն էր: Խսկ Տօնական վարժապետը հիւրերի շարքում էր նսպած: Ալս հանգամանքը, ինչ ասել կուզիւ, որ աւելի բարձրացրեց մեր աշխում մեր սիրելի ուսուցչի նշանակութիւնը: Սազանդարներն ալդ օրուակ առթիւ՝ մի ներբողեան էին շպրազրել Սելվաստապօլի հերօս Անշշիկովի համար և երգում որ ածում էին: Խրը նոքա վերջացնում էին՝ մեր խօսմբը մկանում էր՝ Գալլ Վահանի կրգը՝ «Թագ փառաց մերց, ալք ցանկալիու Հիւրերի շարքումն էր նաև կաթուղիկու-

սական փոխանորդը, — Կարապետ աղա Նազուբեանցը, « Ի՞՛ բը նաշից լետով, արձակելով մեզ՝ հրապարակաւ լալտնեց, « Ո՞ Ա-մետիս աղան խմբի բոլոր անդամներին մի մի հատ զանա-ուղեալ (հասարակ մասուաքս) շապիկ է ընծալում, Եւս և՝ տը-նանկներին մի մի ձեռք զգեստ: Մի շաբաթ չանցած Աւետիս աղալի խոստումը Մրիւ կատարուեց: »

Արդ օրուանից մեր խումբը, երբեմն ամբողջովին, եր-բեմն մասսամբ, լինում էր Բօզօխանցի տանը և միշտ առա-տապէս վարձատրում: Սուտնձին խնամատարութեամբ վերա-բերում էր մեզ Աւետիս աղալի կինը, Կէկել խանումը, որ-վերին աստիճանի բարեսիրտ կին էր, Առանձին սենեկում, երբ ժառաները մեզ կերակրում էին՝ նա մի քանի անգամ մտնում էր և ծառաներին ապսոլում, « Ո՞ ամեն տեսակ՝ կերակրեղէնից ևս մեզ բաժին տան: Քաղցրեղէնները ինքը՝ իւր ձեռքովն էր բաժանում մեզ, Եւ երբեմն էլ նստում էր մեզ հետ և մեզ զբաղեցնում: Մեր ծնողաց վիճակի մասին տեղեկութիւններ էր հարցնում և լետոյ՝ ալիւր, պանիր և իւղ ուղարկում մեղանից աղքատների տները: Ասում էին, « Ո՞ ալէ տեսակ բարիքներ՝ տիկինը քաղաքի և միւս աղքատների հա-մար էլ էր անում և, որպէս թէ, միշտ մարդուցը ծածուկր-նս չգիտեմ թէ որքան ճիշտ էր այս կարծիքը: Ասսքանս մի-այն լաւ գիտեմ, որ Ախալքալաքում, ընդհանրապէս, որքան Աւետիս աղալին ասում էին մարդիկ նորա դաժան բնու-թեան համար, ընդհակառակը, Կէկել խանումին լարգում, սրտանց պատում էին: »

Իսկ մենք, երգեցիկ խմբի մանուկներս մօր նման սի-րում էինք նորան: Մեր մտերմութիւնը այն կէտին էր հա-սել, որ երբ ուսուցիչներից մէկը կամ միւսը՝ մեղանից ալտ-ու այն ոքին ուղում էր պատժել, կամ պատժում էր, մենք Կէկէլ խանումի անունով սպառնում էինք նորան: Երբեմն էլ՝ նոյն իսկ զանգաւառում էինք: Պատահում էլ էր, որ մենք Կէ-կէլ խանումին զանգաւառում էինք նոյն իսկ իւր ամուսնուցը, երբ նորա հրամանով ուղղիով ջարդում էին մարդկանց: Բարի կնոջ աչքերը արտասուքով լրում էին և նա արդարացնում էր իւր ամուսնուն ասելով՝ « աղան վատ մարդ չէ, որէնքը վատ է»:

ԺԴ

1852 թուականի չեմ լիշում որ ամիսն էր ու օրն էր Ախալքալակը մի մեծ զօրաբանակի էր նմանում: Փողոցնե-րում անց ու դարձ անող մարդկանց թիւ ու համար չկարո-գաւառի ամենահեռաւուր գիւղերի բնակիչներն անգամ եկել էին լցուել քաղաքը: Տների կտորները կանալքն էին բըռ-նել, իսկ փողոցներն և հրապարակները՝ տղամարդիկ: Եկեղե-ցու շուրջը՝ ոմանք ոտքով, ոմանք ձիերով՝ զժուածի նման

անդադար դէս ու դէն էին վազված ոստիկանները կարգապահութեան վերալ հսկելու համար:

Եկեղեցու գաւթում շուջառներով կանգնած քահանաների թիւը՝ հարիւրից անց կը լինէր, Յանկարծ եկեղեցու զանգակները հնչեցին. Մի խոռլ անբացատրելի շարժում ու դզրդիւն սկսուեց ժողովրդի մէջ. Ուրախութեան ձայներ և նշաններ, արտասուրք, հեծկլտոց, երեսների խաչակնքումն, գլխների մերկացումն, փառաբանական ձայներ, միմեանց հրեւ, հըրմակել, հեծեալների որընթաց արշաւումն, կանանց և երեխանների ճղճղոցը, ոստիկանների ազաշանքներ և սպառնանքներ,—ահա թէ մի ակնթարթում ինչ առաջացրին եկեղեցու զանգակների հնչւնը չինդ տառը ըսովէից լսող՝ քաղաք մտաւ «Հողեր Տէրը»—Ներսէս Ն. Աշտարակնեցի՝ ամենալին Հալոց կաթուղիկոսը:

Եկեղեցական պատշաճաւոր հանդիսով հարրապետը եկեղեցի մտաւ Զեմ վիշում բան խօսեց թէ ոչ. միայն լաւ միտուէ, որ եկեղեցական հանդէսը վերջանալուց լսող՝ ատոնի մէջ տեղը մի բաղկաթոռ դրին, որի վերա նատեց կաթուղիկոսը և ապա ժողովուրդը սկսեց սորա աջը համբուրել. Այդ արարողութիւնը մօտ կ ժամ տեսեց. Եւ այդ բոլոր ժամանակ՝ վեհափառի ետեւը և կողքին կանգնած էր հոգնորականութիւնը, իրան պարագլուխ ունենալով կարապեա աղա Եաղութեանցին. Պօղուեան Աւետիս աղան էլ, ոստիկանական ծառալողներով, շարունակ ել ու մուտ էր անում և կարգապահութեան վերալ հսկում. Կաթուղիկոսը աթոռից գեր կացաւ այն ժամանակ, երբ երեկուեան ժամերգութիւնն սկսուեց, որից լսող, և միննոյն կարդով, շարունակուեց աջանամբուրի արարողութիւնը մինչեւ... չեմ կարող ասել գիշերուալ մրնչն որ ժամը, միայն երբ հալու, որի ետքեւում ես քնած եմ եղել, ինձ զարթեցրեց, որ իրան հետ գնամ հոգիոր տիրոջ աջը համբուրելու, —երբ աչքերս բաց արի՝ տեսաւ, որ եկեղեցին ամբողջապէս լուսաւորուած է և ախտել ոչ ոք չկա, բացի կաթուղիկոսի, հաճի տղալից և քաղաքի քահանաներից. Վեհափառը կանգնած էր և Եաղութեանի հետ էր խօսոււ. Հալրս չոքեց և աջը համբուրեց. Նոյնը արի և ես, Եւ երբ կաթուղիկոսը հօրիցս և Եաղութեանից տեղեկութիւններ էր ստանում եկեղեցում վաճառուած դեղին (որ ժողովուրդը տներումն էր թափում) և սպիտակ մոմերի գների և քանակութեան մասին, ես աչքերս սնեաած կաթուղիկոսին էի մտիկ տալիս.

Ներսէս Ն. կարձահասակ մարդ էր, ամբողջապէս սպիտակած, մեծաքիթ, խոչոր աչքերով և խիտ լօնքերով. Կազմուածքը բարակ, լղար, կերպարանքն ու հալեացքը՝ աւելի ահարկու քան զրաւիչ, ինձ գոնէ ալսպէս թուաց ազգի ալդ պետը, որին ես առաջին և լիբջին անզամ միմիայն Ախալքալակում տեսաւ, ձշմարիտ է, հետեւեալ օրը Վեհափառը բարեհաճած էր մեր զպրոցին ալցելել, որ և հարցաքննութիւն

էլ տեղի էին ունեցել, —բայց ևս ալդ օրը, զժբաղդաբար, դպրոցումը չէի: Հայրս ինձ բանառկել էր տանը, ևս ահա ինչու Նախընթաց դիշերը՝ երբ Կաթուղիկոսը եկեղեցում հարցրեց իմ անոնց, տարիքը և կարդացածս դասագրի ա-նոնը, իստոյ եկեղեցու ճաշոց զրբի վերաէ մի տեղ կարդալ տուեց և դրավարժութեանս հաւանեց՝ ևս ոգերուեցալ և, որ- տեղից որտեղ, լանկարծ կամնալով վրէծինդիր լինել տէր Սիմօնին, մի տարի առաջ ինձ խփած փալախքալի համար, վեհափառին ասացի՝ ավարժապես, տէր Սիմօնը ինձ փալախքալ զարկեցու:

Հայրս իսկոյն բերանս բռնեց, կաթուղիկոսը և նորա հետ հաճի աղան սկսելին ծիծաղել, ինուն տէր Սիմօնը քիչ էր մնում թէ կաթուածահար լինի, Ալդ ամնակից իստոյ ևս իմ չիմարութիւնը զգացի թէե, բայց արդէն ուշ էր:

Վեհափառը գնաց նազուբանցի առւնը, որ մի մուտք էլ նկեղեցու զաւթի միջիցն ունէր, իսկ հայրս Կենդեցին կողպելով՝ տարաւ ինձ առն, լաւ թակնց, առանց ընթրիքի թողեց և կարգադրեց, որ ինձ զպրոց չթողնեն, մինչև հո- գեռոր տիրո՞ջ մնիսնելը Ախալքալակից, Բալց..., հօրս հաշիւնն- ըը սիսալ դուրս եկան, Որտոնեան կաթուղիկոսի զպրոցին ալ- ցելած օրը թէե ևս ահճտեղ չգտնուեցաւ, բայց դորա փոխա- րէն բազդ ունեցաւ երկրորդ անգամ հօրս հնետ կաթուղիկո- սին ներկայանալու՝ նորա կացարանումը և իրան պահանջ- մամբը:

ԺԴ

Նախաքան ինձ կաթուղիկոսին տանելը՝ հայրս, երկար բարակ, ինձ խրատում և լորդորում էր, որ ևս իմ կողմից հոգեսոր տիրո՞ջը ոչինչ չասեմ, առ միմիան նորա հարց- մունքներին և եթ պատասխանեմ, ոչ ոքից և ոչինչ գանդատ չանեմ և եթէ կաթուղիկոսը տէր Սիմօնի և կամ միւս վար- ձավետների մասին առ հասարակ մի բան հարցրեց, —ևս պա- տասխանեմ թէ՝ ոչինչ չգիտեմ, ևս ալս ամեն խրատներն հալ- րըս ինձ տալիս էր մի ախսախի քնքով և փաղաքական ձալնով ու ձեռվ, որ կարծես ևս և ինքը մի խստ դատաւո- րի մօտ էինք գնում և իմ խօսքից կախուած լինէր թէ իմ և թէ հօրս՝ իրան ապագան, կեանքը Բանը նկանում է, որ հայրս ինքն ևս չէր իմանում, թէ ինչի համար կաթուղիկոսը, հաճի աղալի միջոցաւ, իրան և ինձ կանչել է իւր մօտ Նախ- ընթաց երեկուան մեր ընտանիքը ալդ հարցով զբաղուեց երկար ժամանակ, բայց մի եղրակացութեան չհասաւ Հայրս վախենում էր մի գուցէ կաթուղիկոսը վիրաւորուելով, որ ևս նրան վարժապետ եմ անուանել, ալֆմ ուղում է իրան զըր- կել ժամկոչութիւնից, ևս էլ վախենում էի, որ կաթուղիկոսը, Բերեա, մատադիր է ինձ զպրոցից դուրս ձղել, Սալրու, աւելի

Հեռուն դնալով՝ հօրս կամ իմ զլիսին գալիք մօտակալ չարի-
քի պատճառը համարում իր այն վիրաւորանքը, որ ես մի
աարի առաջ հասցըն էի տէր Սիմօնին՝ վերջնիս վերակ
դրուած պասկիվլը դպրոցում երգելով և ընկերներիս էլ եր-
գել տալով: Հալրս մօրս կարծիքը փարատում էր լալտնելովի
որ նա, իւր ժամանակին, տէր Սիմօնի առաջ մեղալս է ե-
կել, ներողութիւն խնդրել և աէր Սիմօնը իմ լանցանքը նե-
րել պրեծ է արդէն: «Քայլ, աելացնում էր հալրս,—որովհե-
տե ևս լանդննեցալ տէր Սիմօնի ինձ տուան փալախքալի ժա-
ման ալժմ «Հոգենոր տիրոջը» գանգատուել, ուստի և տէր Սի-
մօնը իրաւունք ունի ալժմ մի տարի առաջ տուած ներողու-
թիւնը լեսա կոչել և ալին և ալին: Եւ ալս ամեն դատողու-
թիւններն անելիս, այս թեր ու զէմ կարծիքներն լալտնելիս՝
ծնողքս շարունակ ինձ նախառում և անարգում էին: Եւ եթէ
մօրս և քոլերիս միջամտութիւնը չլինէր, հալրս պատրաստ
էր մինչեւ անդամ մի լաւ ջարգել ինձ արդ երեկոր: Ես, ի
հարկէ, սմբած և սուս ու փոս նստած էի բոլոր ժամանակը,
ինպէս մի կատարեալ լանցաւոր: Բայց առաւոտը երբ հալրս
իւր տօնը փոխելով՝ սկսեց մեղամբար և քնքշաբար խրատել
ինձ, իմ մէջ մի փոփոխութիւն տեղի ունեցաւ: Ես, կարծես,
զգացի, որ մնջաւոր չեմ, ալ մեղաւոր էր տէր Սիմօնը, որ
ինձ փալախկալ էր զարկել մի երգի համար, որի բոլոր հանդա-
կութեան էութիւնը ես չէի հասկանում: Մեղաւոր էր հալրս
որ արդ անմեղ բանի համար ինձ լաւ թակել էր, մեղաւոր էր
ժալրս, որ իմ բնըանը կարմիր տարտեղ էր ածեր: Սի բանում
միմիալն ես մեղաւոր էի զգում ինձ, ալին է, որ կաթուղիկո-
սին փոխանակ «Հոգենոր տէր» անուանելու «վարժապետ» էի
անուանել: Բայց, մտածում էի ինքս ինձ, եթէ արդ բանի
համար կաթուղիկոսը ինձանից բացատրութիւն պահանջնէյ:
կասեմ՝ «Հոգենոր տէր» քաթաթալս էի: Ալսպէս հօրս խրատ-
ներն ու պատռէրները՝ բոլորովին հակառակ արդիւնք առաջ
քերին իմ մէջ և ես մոտքում դրի: որ եթէ կաթուղիկոսը
վարժապետների մատին ինձ մի բան հարցնելու լինի, կարա-
պետ վարժապետ Մեծատունեանցից ես գանգատուիմ, որ
թուարանութեան դասի ժամանակ ինձ, ի զուտ տեղը, ապ-
տակեց:

ԺԵ

Մտանք Նաղուրեանցի տօնը, Նախասենեակումը հալրս
գլխարկը հանեց, երեսը խաչակնքեց: Սի և նոյնը ես արի,
Մտանք դահլիճը, ուր կաթուղիկոսը, առանց վեղարի, հագին
միմիալն կարա ունենալով՝ ման էր դալիս: Նաղուրեանցը և
մի քանի հալ վաճառականներ կանգնած էին: Երբ ծնկաչոք
այլ առանք պրծանք՝ կաթուղիկոսը դարձաւ դէպի ինք:
—«Դու ինչո՞ւ երէկ ուսումնարանումը չըկալի՞ր»:

Ես հօրս երեսին նալեցալ՝ կամենալով իմանալ թէ բնչ պատասխանեմ. Որովհեռու ինձ տուած հրահանդներում հալլու մոռացել, կամ գուցէ ամեննեին զմսի չէր էլ ընկնէլ թէ՝ կաթու զիկոսը ալդպիսի հարց կարող է տալ ինձ.

«Երէկ էլ հալլրդ փալախքալ զարկեց քեզ, հա, — հարցրեց կաթուղիկոսը քմծիծաղով.

—Փալախքալ չզարկեց, ձեռքերով ծեծեց, պատասխանեցի ես՝ բայց փոխանակ կաթուղիկոսի երեսին՝ հօրս երեսին նալելով, որ սասափիկ գունատուած էր և աղերսախտոն հալեացքով դէպ ի հաճի աղան էր թեքուած՝ կարծես նորամիջնորդութիւնը հալցելով. «Ծառալ եմ սուրբ կարգիդ... զեռ նոր էր հալրս բերանը բաց արել, որ խօսի կամ բացատրուի, երբ կաթուղիկոսը ընդհատելով նորան լալտնեց, որ ինքը կարգադրել է, որ ինձ համար չորեր, կօշիկներ և ուսումնական ամեն պիտուքներ՝ ալսունետես հաճի աղան գնէ. Եւ մի տարուց իտող էլ՝ ինձ էջմիածին ուղարկէ. «Համաձայն ետո, ի վերջու հարցրեց կաթուղիկոսը հօրս. — Ծառալ եմ սուրբ կարգիդ, ինչպէս որ կը հրամալեն, պատասխանեց հալրս և ուրախացաւ. Ուրախութեան նշաններ արտաւալտեցին հաճի աղան և ներկայ եղող վաճառականներն ես, որոնցից մինը, խաչառուր աղա Բարալեթցեանց անունով կարծեմ՝ լալտնեց, որ մինչև իմ էջմիածին գնալմ՝ իմ շօրերի, կօշիկների և գըլխարկների ծախսը ինքը իւր վրալ է առնում և առաջարկեց հօրս, որ վաղն և եթ գնալ իւր խանութը և հարկաւոր ճոթեցնը և կօշիկների ու գլխարկի փողն ստանալ. Մի ուրիշ վաճառական լալտնեց, որ իմ ուսման պիտուքների ծախսն էլ՝ ինքն է իւր վերալ առնում. Երրորդը ինձ առաջարկեց, որ ասեն օր իրանց տանը ճաշեմ Ուրախացած և հալարտացած՝ հալրս և ես դուրս եկանք. Դրսի չէմքի վերալ հալրս, — որքան լիշում եմ, — առաջին անդամ ինձ պինդ սեղմեց իւր կրծքին և ջերմաշերմ համբուրեց մի քանի անգամ:

— Հալլրիկ, էջմիածին թնչ բան է, առն գնալիս՝ հարցրեց ես հօրից:

— Միեծ վանք է, որդի, պատասխանեց նա: Ցիսուս միածինը նորա վրալ է իջել. ս. Գրիգոր Լուսաւորիչը ախտել է չարչարուել և մեր լուս հաւատի համար նահատակուել. Հօդեւոր տէրը ախտեղ է ապրում և մի միծ վարժատուն է պահում...

— Հոգևոր տէրը թնքն է դաս տալիս:

— Ինքը դաս չի տալիս, Բայց լաւ լաւ վարժապետներ ունի ձեռին տակը:

— Տօնական վարժապետիցն էլ լաւ են,

— Տօնական վարժապետը նրանց աշակերտի աշակերտը չէ կարող լինել.

Հօրս վերջին խօսքերի վրալ՝ իմ ուրախութիւնը եռապատկեց, քառապատկեց: Բայց... երկարատես չեղաւ ալդ: Երբ

մալրս լսեց, որ որոշուած է ինձ կշմիածին ուղարկել, մի-
անպիսի լաց ու վախասուն բարձրացրեց, որ հէնց իմանաս-
մեր ընտանիքի մի մեծ դժբաղառութիւն էր պատահել. Հօրս-
փաստաբանութիւնքը, իմ աղջանք ու պատաստանքը ոչ մի-
ներգործութիւն չունեցան մօրս վերար նա արհամարհում
ոյինչ բան էր համարում վաճառականների արած խոստում-
ները Շինչքան որ մենք կարող ենք, այնքան կըհագուեց-
նենք մեր տղալին. ինչ որ մենք կուտենք, նոյնն էլ մեր
տղալին կուտեցնենք—պնդելով պնդում էր մալրս և հօրից,
պահանջում էր, որ քօչենք գնանք մեր հալրենիք՝ Ախալ-
ցիսա. Ոչ մի հնար չեղաւ մօրս համոզելու, նորա արտասուք-
ներին վերջ տալու, ուստի հալրս ալլ ևս չկամեցաւ նորա
լուղմունքը սաստկացնել և խոստացաւ խնդրել Հաճի աղալին,
որ հարկ եղած միջնորդութիւնը անէ կաթուղիկոսին. «Իսէ
նթէ ինձ խարես և շանդրես, այն ժամանակ ես ինքս մեր-
քահանալին հետ կերթամ և հոգնոր տիրոջ ոտքը կընկնեմ,
որ զաւակիս ինձանից չխլէ».

ԺԶ

Հալրս խոր մտածմանց մէջ ընկաւ ևս, ի հարկէ, շատ
տիրեցի և, հօրս նման, անելանելվ գրութեան մէջ էի գըտ-
նում. Մի կողմից շատ փափառում էի կշմիածին գնալ, միւս
կողմից մօրս աղի արտասուները ջիգարս կտոր կտոր էին-
անում. Ուստի երբ հալրս հեռացաւ՝ մօրս վշովը փաթաթուե-
ցաւ և նորա նման սկսեցի լաց լինել.

Մի ժամից լետոյ հալրս վերադարձաւ և լալտնեց, որ
ըստ իւր խնդրանաց, Հաջի աղան միջնորդել է հոգեսոր տի-
րոջը և նա հանել է իւր կարգադրութիւնը լետս առնել.
Բայց... մալրս չէր հաւատում հօրս խօսքերին. Եւ առաջուա-
նից աւելի՝ լուղուել սկսաւ.—Նա կամեցաւ ծխական քահա-
նակի հետ ինքը ներկալանալ կաթուղիկոսին, բայց հալրս հա-
կառակեցաւ շթողեց՝ զալրանալով և բարկանալով մօրս վրայ,
որ իւր խօսքին չէ հաւատում. Մարդ ու կնիկ սկսեցին մի-
մանց հետ կռուել, —մի դէպք, որ սռաջին ե, բարեբաղդա-
բար, վերջին անգամն եմ տեսել մեր ընտանիքում.

Հետևեալ օրը ձախ ընկաւ թէ կաթուղիկոսը գնում է։
Հալրս տանը չէր. Մալրս ինձ վերցրեց և գնացինք մեր ծխա-
կան քահանալի տունը. Նորա անունը Տէր Մարգիս էր, որ
վերին աստիճանի երկիւղած և աղօթամէր մարդ էր և ողջ
Ախալքալակում լաւանի էր իբրև մր սուրբ մարդ. Պատմում
էին, որ աղօթքով նա հիւանդներին բժկում էր. թէ որքան
ծխարիտ է ալս՝ չգիտեմ, բայց շատ անզամ արդ քահանալին
տեսել եմ եկեղեցումը որ հիւանդների գլխներին ործշկութեան-
աւետարանո կարդալիս՝ լալիս էր. Տեսել եմ, որ երբ նա սմա-
մարար կամ պատարագիչ եղած ժամանակ՝ սեղանից ցած էր

դալիս վերջին աւետարանը կարդալու՝ հարիւրաւոր մարդիկ, տղամարդիկ և կանաչը, —չոքում էին նորա տուաջ ատենի հանդէպ և տէր Սարգիսը շորջառ և միւս զգեստները, մի առ մի, հանում էր և չօքած մարդկանց վերալ էր ձգում ափարատեա ղցաւ և բժշկեա զիւանդութիւն ազօթքը մըրմընջելով:—Տեսել եմ ալդ քահանային պատարազի նշխարքը թիսելիս՝ որ շարունակ և լաւագին ազօթում էր իսկ ամենուրեալ ժամայրութեանց միջոցին նա շատ լաճախ ծունր էր դնում և երեսը քսում ու քսմում դետինին: Կարդակիցները նորան չէին սիրում, մինչեւ անգամ ծածկարար ծաղորում էին, նորան վարմունքը վարիսնեցիութիւն համարում: Մինք, մանուկներա, տէր Սարգսի կարգակիցների ալդ արածներն ու խօսածները թէպէտ պեսնում և լսում էինք միշտ; բայց և այնպէս տէր Սարգսին աւելի, քան որեէ ալլ քահանայի, պատւում, սիրում և ակսածում էինք: Նամանաւանդ, որ շատ մեզմ և քնքշաբար էր վարւում առհասարակ ամեն մի մանկան հետ:

Ես թէպէտ ինքս չեմ տեսել, բայց իմ ծնսղներիցն էլ և ուրիշ շատ շատերիցն էլ լաճափ լսել եմ, որ տէր Սարգիսը շատ անշահասէր մարդ էր մըկնոյն ժամանակի Ասում էին, որ նա իւր հասութի մեծ մասոր իւր աղքատ ծխականներին էր բաժանում: Եւ թէպէտ ամենից շատ ծուխ նա ինքն ունէր, բայց և այնպէս քահանաների մէջ ամենից աղքատը նա էր դարձնալ, Եւ, ծշմարիտ, նորա տունը մի կատարեալ գետնափոր խրճիթ էր, իսկ զգեստը միշտ հասարակի, միշտ կարկատուն: Մի ուրիշ և հաջուազիւտ լատկութիւն ևս ունէր տէր Սարգիսը: Մինչդեռ իւր կարդակիցները շատ անգամ, տեղի և անտեղի կերպով, նորանով էին զբաղուած, նորա մասին էին խօսում, բամբասում և զրաբանում:—Նա, ընդհակառակը, նոցա վերալ ոչ մի ուշաղրութիւն չէր դարձնում: Նոցա արածները, կարծես, չէր տեսնում, նոցա խօսածները, կարծես, չէր լսում: Այդ դեռ բաւական չէ: Տէր Սարգիսը սաստիկ նախանձինդիր էր միենալու ժամանակ և իւր կարդակիցների անուան և պատուին: Այս մասին ևս ինքս էլ մի վաստ գիտեմ:

«Էր Աիմօնի մասին շարադրուած պասբիլիի առթիւ՝ իմ և զասընկերներիս պատժո են ընմիւրցողին արդէն լալանի է:»

Սիստեղ ես պէտք է լալտնեմ, որ ալդ հարցի մէջ միջանմուել էր նաև տէր Սարգիսը: Բանից դուրս եկաւ, որ տէր Սարգիսը ստուգել էր որ մեր զասարանի աշակերտոներիցը՝ 8 հոգի իւր ծխականների զաւակներն են: Ուստի իւր կողմից, և մի առ մի, դիմել էր ալդ ծնողներին և հարի համարած խրատ ու պատուէր տուել նոցա և նոցա զաւակներին, որոնց թշում, հարկաւ, և ինձ: Տէր Սարգսի ինձ տուած խրատի բոզանդակութիւնը ես չեմ մտաքերում, միայն և ին զդալուն

խօսքերն ու շարժումները, որոնցով նա հաստատում էր թէ առհասարակ քահանակին և մասնաւորապէս ուսուցիչ քահանակին ծաղըող, նորա երախտիքը մոռացող աշակերտը՝ ինչ ու ինչ դժբաղսութիւնների կենթարկուի ալս աշխարհում և ինչ ու ինչ պատիժների հանդերձեալ կեանքում, ալս աստիճան ներգործել էին ինձ վերալ, որ տէր Սիմօնին տեսնելիս՝ տամաշում, խոցահարում և խսկոն գլուխս կախ էի ձգում. Այս տեսնելով տէր Սիմօնը, մի քանի անգամ, դաստանն մէջ հրապարակաւ ինձ հեղնում էր և իւր սիրած խօսքերը, քիթն ի վայր, կրինում թէ՝ «օրհնեալ է փալտն, որով մինի արդարութիւն»: Տէր հօր ալդ հեղնութիւնն էր, կարծեմ, պատճառը, որ մի տարուց լետով ես, անգիտակցարար, կաթուզիկասին դանդատուեցի նորա դէմ:

ԺԷ

Էրը մօրս հետ՝ տէր Սարգսի տունը մտանք, նա այս- տեղ չէր: Կէս ժամի չափ սպասեցինք: Սև ահա տեսնում ենք, որ հանդիպակաց հրապարակի վերալ մեծ բազմութիւն է հա- սաքուել: Մի քանի ըսպէ անցած. և ահա կաթուղիկոսական կառքը շարժում է: «Հոգնոր տէրը գնացո, եղաւ մօրս առա- ջին խօսքը և նա ուշաթափուեց: Գլխին և երեսին իրանց բերաններովը ջուր սրսկելով, կանալք մի կերպ ուշքի բերին մօրս: Սև լաց էի լինում: Ոմանք կանալք ինձ շոլշուում էին, շաքար էին տալիս, ուշաթափուած մօրս կողքիցն հեռացնել էին ուղում և աշխատում, բայց ի զուր իս ձախն չը կտրեցի, մինչեւ որ մայլս ուշքի դալով՝ ինձ իւր գիրկն առաւ շարե- ան կանալք ու մանուկներ խոռնուել էին մեր շուրջը: Մայրս ուղում էր գնալ տուն, բայց մի կին, կարծեօք, տիրուհին, թախանձում էր որ մնանք մինչև տէր Սարգսի գալը, որ, երեի, շուտով կը լինի: Մայրս տատանում էր և իրան առա- ջարկուած սալորի պաստեղից շնչած թթու շարբաթիցը՝ մի կում ինքն էր խմում, մի քանի կում ինձ խմացնում: Չնայած տան տիկնոջ թախանձանքներին տան մէջ լցուած և զուան առաջ խսնուած կանալքն ու երեխաները չէին ուղում հեռա- նալի: Հէնց այն է, որ սկզ բազմութիւնը ճեղքելով մալրս և ես հաղիւ դրսի դռան շէմքն հասանք և ահա «նաշալնիկը» (Աւետիս աղա Պօզօլեանը), մի քանի ձիաւորներով՝ իւր ճին մեր կողմն է քշում: Բազմութիւնը խսկոն ցրիւ եկաւ: Եէմ- քում մնացինք մալրս, ես և տանեցիք: Նաշալնիկի հարցմանը տիրուհին պատասխանեց ինչ որ տեղի էր ունեցել: Նաշալ- նիկը ինձ ճանաչելով հարցրեց սքն մալրն էս: Ես զրական պատասխան տուի:

— Ինչու համար էիր եկել տէրաէրի մօտ, հարցրեց Պօ- զօլեանը մօրիցա: Մայրս պատամեց իսկութիւնը:

— Եչն ինչ դլաէ, նուշն ինչ էս, հեղնելով աւաց՝ նա-

չալինիկը և իւրալիններով հեռացաւ, նս չդիտեմ թէ ալդ վիրատրական առածը ինչ ներգործութիւն ունեցաւ մօրս վերաբ, իսկ ես շատ վիրաւորուեցալ նւ, ինչպէս սկզբներում լիշել եմ, 16 տարի հետով Պօղօլեանցի դէմ գրածս առակում նրան պազ էշա անուանելով՝ իրան բառը դիտմամբ՝ իրան վերադրի:

Առանց ալլ ևս պապսելու տէր Սարգսի տուն գալուն՝ մօրս հետ գնացինք տուն, Սրկու ժամ իւտոյ հալրս եկաւ, բայց զալրացած, նա փողոցում լսել էր մօրս հետ պատահած դէպաքը, Բայց ոչինչ չասաւ, ալլ ճաշեց և իսկոյն անկողին մտաւ հանգստանալու. Ի շնորհս իւր պաշտօնին ծերունին անշուշա շատ լոդնած կը լինէր ալդ օրերում, կէս ժամ իւտոյ եկաւ տէր Սարգիսը, Հալրս վերկացաւ, Նւ նա ու մալրս պատմեցին քահանալին՝ մեր ցարդ խաղաղ լարկի տակ՝ վերջին օրերումս տեղի ունեցած տարածայնութեան պատճառը.

Տէր Սարգիսը շատ ցաւցաւ, որ մալրս հակառակութիւն է ցուց տուել կաթուղիկոսի կարգադրութեանը, որով, թերես, իմ անբաղզութեանը պատճառ դարձել, բայց և ալնպէս, երբ կաթուղիկոսը իւր կարգադրութիւնը լսու է կոչել, ուրիմն ալդ հարցը վերջացած պէտք է համարել և ալլ ևս միմնանց հետ չվիճել. Տէր Սարգիսը միամտացրեց մօրս նաև, որ ինքն ես, իւր կողմից, կստուգէ հաճի աղալից թէ՝ ճշմարիտ է, որ կաթուղիկոսը ալլ ևս ինձ էջմիածին կանչելու չէ.

—Ե՞րբ ինձ լուր կը բերես, հարցրեց մալրս տէր Սարգսից, որ պատրաստում էր գնալ քահանան լալտնեց թէ՝ որովհետև նոյն օրերում հաճի աղալի գլուխը խառն է լինելու, ուստի ինքը չէ համարձակում նորան խանդարել, ալլ կը սպասէ լարմար առթի. Ցամենան դէպա՛ խոստացաւ, մի շաբաթուալ ընթացքում, լուր բերել մօրս.

ԺԷ

Ինչու համար իմ էջմիածին գնալը՝ մալրս չէր ուզում. Անշուշա նորա համար, որովհետև էջմիածին զնացողը, վերջ ի վերջու, վարդապետ պէտք է դառնար մանաւանդ այն ժամանակ. Եւ ուրիմն, թէ իրան և թէ ընտանիքի համար պէտք է կորչէր գնացողը. Անշուշա ալս էր պատճառը, որ մալրս ոչ երբէք համաձանեցաւ թէ հօրս և թէ մեր ծխական քահանալի կարծիքին՝ թէ նա իմ դժբաղզութեան պատճառ դարձաւ.

Մի քանի օրից լսող՝ Տէր Սարգիսը լուր բերեց, որ, վիրաւի, կաթուղիկոսը իւր կարգադրութիւնը լսու կոչած է եղել. Նւ ալդ լուրն առնելուց լսողը միմիալն՝ մալրս սկսեց ազատ շունչ քաշել. Բայց... ալս բանը մեր ընտանիքի վրա էժան չնատեց. Գրեթէ բոլոր քաղաքը սկսեց մեղ վերալ իօսել թէ՝ մենք ինչպէս վստահացել ենք հողմոր տիրոջ չխօսքը կոտրելը, նորա կամքին հակառակ գնալ. Հատերը մօրս էին

և ղաղաղրում, որ իւր կամքը ամենալին Հալոց կաթուղիկոսի կամքից գերազանց: Շատերն էլ հօրս էին մնդաղրում, որ քաջութիւն չունեցաւ իւր կնոջը լաղթանարել, իսկ իմ ընկերները, և առ հասրակ դպրոցի աշակերտները, որ մինչև արդ ժամամարհել՝ իմ վիճակի վերալ նախանձում էին, սկսան ինձ արհամարհել, ծաղրել: Զարանձիները մինչև անդամ հնարել էին, որ ոչ թէ կաթուղիկոսն է առաջարկել, որ ես էջմիածինամ, այլ իբր թէ հալրս ինքն է խնդրած եղել և կաթուղիկոսը մերժել է ասելով, որ էջմիածինը ժամկոչներու որդոց համար չէ»: Մի խօսքով մի ամսից աւելի Ախալքալակեցիների՝ մեծի և փոքրի խօսակցութեան նկաթը մենք էինք: Եւ դրեթէ ամենքն էլ մեղ էին դատապարտում: Բանն ակնտեղ հասաւ, որ կաթուղիկոսի ներկալութեամբ ինձ առաջ առաջ խոստումներ անող վաճառականներն ևս՝ իրանց խոստումը զրծեցին ոչ թէ իրանց ժլատութեան պատճառով, այլ ինչպէս իրանք էին բացատրել հօրս, իբր թէ այն պատճառով միմիալն, «որ մեր ընտանիքը լանդինել էր հոգևոր տիրոջ ախօսքը գետինը ձգելո», նորա կամքը չկատարել: Ի պատիւ Ակետիւ աղա Պօղուեանցին պէտք է վիշեմ, որ երբ նա լսած էր, որ վաճառականները իրանց խոստումից լիտ են կանգնել, ինքն էր լանձն առել հոգալ ինձ համար խոստացած ժախքները: Եւ մինչև մեր զաղթելն Ախալքալակից՝ հոգում էլ էր:

Լալատին աշշերով հալրս պատմում էր, որ մինչև անդամ տէր Սիմոնը ևս սկսել է զլուխ բարձրացնել և «հին գարմանը քամուն տալ»: Տէր հալրը քաղաքում տարածած է եղել, որ իւր դէմ գրուած պասկվիլի հեղինակը՝ իբր թէ հալրս է եղել և ես նորանից սովորելով՝ և նորանից թելաղուուած՝ երգել եմ զպրոցում և երգել տուած ընկերներիս: Եւ հէնց արդ պատճառում՝ տէր Սիմոնը՝ իբրև աւագ երէց, հօրս առաջարկել է, որ իւր կամքով հոռանալ ժամկոչութիւնից: Ի հակառակ դէպս՝ զուրով կը ձգէ:

Այս ամեն անախորժ հանդամանքները մեր ընտանեկան խաղաղութիւնը տակն ու վրալ արին: Ամենից շատ տուժում էր մալրս, իբրև սկզբնապատճառ ամենալին չարեաց: Հալրս էլ էր նրան մնդաղրում և երբեմն, վիճարանութեան ժամանակ, մինչև իսկ թակում: Գոլրերս—եղբայրներս էլ և բարեկամ ու ծանօթներն էլ, ամենքը, ամենքը մօրս էին մնդաղրում: Բարեսիրտ տէր Սարգիսը, որ արդ միջոցներում լաճախում էր մեր տուն, մինչև անդամ խորհուրդ էր տալիս, որ հալրս և մալրս միասին մի ինդիր ուզարկեն կաթուղիկոսին, «մեղալ զոշեն» և ինսգրեն, որ կարգադրէ ինձ էջմիածին տանելու: Բայց մալրս ոչ երբէք համաձայնեցաւ: Եւ պնդում ու պահանջում էր, որ հալրս թքէ իւր պաշտօնի վերալ և մենք զադ թենք գնանք Ախալքլաս, ուր ազգականներ ունինք, «ըսնք կողնեն մեղ, Դալով ինձ, ինձ էլ մալրս խրախուսում, սիրտ էր տալիս ասելով, որ Ախալքլասում աւելի մեծ զպրոց կալ,

քան Ախալքալակի դպրոցը և թէ ևս ալնտեղ՝ «աւելի մածուսում կստանամ», և ընդ սմբն, միշտ ծնողացս աչքի առաջ կը գտնուիմ: Մասսամբ մօրս պահանջմանց զիջանելով, մասամբ էլ պաշտօնիցը դուրս ձգուելու վտանգը աչքի առաջ ունենալով՝ հալրս վերջ ի վերջով խոստացել էր տէր Սիմօնին թողնել յամկոչութիւնը մի ամսից լսուու:

ԺԹ

Աս թէպէտ լաճախում էի դպրոց, բայց ոչ ակնքան սիրով և կանոնաւոր կերպով ինչպէս առաջ, վերոյիշեալ զէպքերը բաւականին սառեցրին իմ սէրը զէպ ի դպրոցը: Ուստի երբեմն, և մասնաւորապէս տէր Սիմօնի դասի ժամանակ, փախչում էի դպրոցից ու քաղաքին կից զաշտումը թափառում, ծնողներին խարելով միշտ իբր թէ դպրոցումն եմ եղել: Հալրս երբեմն իմ սուտս բռնելով սկսում էր ինձ թակել: Մալրս միջամտում էր և ինձ պաշտապանում: Հալրս ինձ թողնելով՝ սկսում էր մօրս հնա վիճել, կռուել, և ալդ ամսնի հետեանքը, վերջ ի վերջով լաց, արտասուք և մօրս ուշագնացութիւն և դորա համար իմ ճիշն ու աղաղակը, հարեանների խոնութիւն և նոցա մօրս հացրած օդնութիւնը իրանց սովորական, բարբարասական միջոցներով:

Մօրս ուշագնացութեան արդյուսի օրերից մէկումն էր, երբ կէսօրին դպրոցից տուն գալով՝ մեր դրան առաջ պատեցի երկու հարեան և ծանօթ կանանց, որոնք շատ տըսքած էին և ինձ չէին թողնում, որ ներս մտնեմ: Նորքա ինձ բարոնեցին, որ մալրս երկունքից ազատուելու վերայ է և տատմալը ոչ ոքին ներս չէ թողնում: Խնդրեցի, աղահեցի, բայց ի զուր Տան ետքեցի՝ խկոն բարձրացաւ կտուրը և աշարչիվանից: *) սկսեցի ծածկաբար մտիկ տալ և, Աստուած իմ, ինչ կմ տեսնում: Խացի տատմօրից սենեկում կան նաև երկու հարեան կանալք՝ որոնք մօրս պպացնում են տաք թորոնի վերալ և չնակած նորա եզան նման բառաշումներին, չեն հեռացնում: Մալրս կիսակենդան է դարձել, բայց նորա էլի ծամերիցը քաշ են տալիս, էլլի ճնուում ու տրորում են երեսը, քաշում նորա ականջները խսկ քրտնախաչ տատմալը հուպ տալիս սեղմում է (մասած անում) մօրս կողերը: Զիգարս կտոր կտոր եղաւ: Ինձ ակնպէս թուաց, որ կանալք հաւաքուել են դիտմայէ մօրս սպահնելու: Եւ հալրս դիտմաբք տանից հեռացել է, որպէս զի ականատես և մասնակից չինի մօրս սպահնման: Կտուրի հողով գոպս լեցնելով՝ դնացի և շէմքի առաջ կանդնած կանանց զիխներն ու երեսներն ի վեր սկսեցի հող շաղ տալ կտուրից: Քարի կտորտանքներ էլ էլ:

*) Կտուրի լուսամուտ, ոք սովորական էր այն ժամանակներում, մասամբ և այժմ:

ձղում. Տիմնելով՝ որ իրանց հարուածողն ես եմ, կանանցից մէկը փախաւ գնաց իրանց տունը, իսկ միւսը իմ բարձրացած տեղով աշխատում էր բարձրանալ կտուրը և ինձ բռնել, բայց ես վերն, ո նորան աքացի տուի, վալը գլորեցի, իսկ ինքս ցած թռչելով վաղ տուն և ահազին գոռիւն գոչիւնով՝ մօրս վկին փաթաթռուեցալ. Գետնատարած մարտս աչքերը բաց արաւ և էլի փակեց, Կանալք բռնութեամբ ինձ դուրս տարան և ետքեիցս սենեկի դուռը կողպեցին. Բակում ես մնացի մննակ, Թակում եմ դուռը չն բաց անում, Լալիս, աղաչում, ողաղատում եմ, ամենեին ուշք չն դարձնում. Արի ես դոցա վրէծինդիր լինեմ, ասածս ու կատարածս մէկ եղաւ. Մեր տունը դանուում էր բերդի կողմը և քաղաքի արդ կողմի տների մնանավերջինն էր. Տօնը բաղկացած էր մի շատ ընդարձակ և լան սրահից. Սրահի հանդիպակաց ծալրերում երկու սենեկների կալին. Մինը մենք էինք վարձել, միւսում ապրում էր տանուտէրը, որ մի ալրի պառաւ էր Մարիսաթուն անունում. Մարիսաթունը բրուտ էր և կաւից թորոններին և ամաններին լանկարծ չղիպչենք ու չփրչընք. Խնքը Մարիսաթունը շատ բարեխրտ կին էր և սեպհան որդի չունենալով մասնաւորապէս շատ էր սիրում ինձ և, առհասարակ, սեր ընտանիքին. «Եկեսցէի» կամ հանգստեան աղօթքի ժամանակ համ միշտ գալիս էր մեր սենեակը և, իրեն մեր տան անդաւը, մեղ հետ աղօթում էր. Երեւնն էլ ինձ հետը տանում էր իւր սենեակը և գիշերները ախտել քնացնում աւելի լաւ անկողնի մէջ, քան թէ մերն էր. Երբ հայրս ու մալրս, ժամանակ առ ժամանակ, վէճի էին բռնում, Մարիսաթունը միշտ մօրս պաշտպան էր հանդիսանում. Բացի գորանից՝ ես իմանում էի, որ երբ մեր ընտանիքը Մարիսաթունի, հետ բաղանիս էր գնում, — ես էլ հետը, — բաղնիսի վողը՝ միշտ Մարիսաթունն էր վճարում. Եւ բաղնիսից վերադառնալիս՝ մեղ բոլորին իրան սենեկումը շալով հիւրասիրում էր. *) Եւ ահա ադ կինը ևս միացել է իմ մօրս սղանելու գործուսր, մի ակնթարթում միսաք արի ինքս ինձ և, ամենայն մոլեգնութեամբ, ոկսեցի ոտքերով և ձեռքերով փշրել ու կոտրատել սրահի մաշի բոլոր թորոններն ու ամանեղէնքն և... հալրա ոչ պի բնրդի ձուը և աշնանդից դէպի կորիս զիւղը. Դիշերը վրալ հասաւ, բայց ես դեռ զիւղ չէի հասել.

Կորիսի և Ախալքալակի կէս ճանապարհի վրալ՝ մի քար-

* Դալի ջուրը պղնձեալ ամանովն էին տաքացնում, որովհետեւ հեշտաեռը դեռ ամեն տուն մուտք չէր գործել ալդ ժամանակ լուսուս

քարուտ ձորակ կալ, որի միջով մի սառնորակ աղբիւր է հոռում. Ազրիկի առաջ փալտաշէն մի երկար «գուռ» կամ տաշտ էր շինած, որի մէջ հաւաքուած ջուրը խմում էին դաշտում արածող չորքոտանիները. Սաստիկ լոգնած լինելով՝ երես և ստներս լուացի, ջրից կում կում խմեցի ու նստեցի հանգատանալու. Կողքիս և բաւականին քարի կտորտանքներ հաւաքեցի, որպէս զի եթի շան կամ գալլի պատահեմ, կարողանամ ինքս ինձս ինձս պաշտպանել, Գիշերուայ մռալլ մթութիւնը, իմ մէն միայնակութիւնը, դազանների երկիւղը, Մարիսաթունին հասցրածս վեասից՝ իմ մէջ առաջացած սարշանքը կամ խղմի խալիք և վերջապէս մօրս մահացու, կամ արդէն մահացեալ, վիճակը սիրոս ու հողիս տակն ու վրալ արին. Եւ ես սկսեցի աղլողորմ ձախով լաց լինել, նրբանն երբենն էլ ձորակից դուրս դալով՝ սկսում էի չորս կողմը նակել մի անցորդ, մի ճամբորդ, թէկուղ մի չորքոտանի կենդանի էի ուղաւմ տեսնել, բաց ի զուր. Քունս տարաւ, խոտերի մէջն ընկալ ու քննցար, Նրազում տեսալ մօրս՝ բոլորովին ողջ առողջ, մի փոքրիկ երեխալ գրկում բռնած՝ ման էր դալիս մեր տան որակի միջն և ինձ կանչում էր բարձրաձայն. Քրնիցս վեր թուալ, Ոչ ոք չկալ, չորս կողմն խաւար է. Մրտած եմ և սպատիկ զողղողում, Հասկացալ, որ մօրս երազումն եմ տեսել, բաց, զարմանալի բան, մօրս կանչը ականջիցս չէ կտրում դարձեալ, Եւ ինձ թւում է, որ մալրս ինձանից շատ հեռու չէ և ես նորան տեսնում եմ.

— «Մալրիկ ջան, գալիս եմ, ահա գալիս եմ—անդդալաքար պատասխաննեցի ևս և ամենալի արագութեամբ ճանապարհ ընկալ դէպի Ախտալքալակի. Ճանապարհի անհարթութիւնը, խորդուրորդութիւնը, մի քանի անդամ սալիթաքուել և վալր ընկնելո՞ւ երբէք չկարողացան քալերիս արագութիւնը դանդաղեցնել. Արշալուսը նոր սկսում էր բացուել երբ քըրտ նաշաղախ մեր դրան առաջ կանդ առալ. Դուռը շարժեցի. քացուեցաւ, Գիտէի, որ ալդ միջոցին հալրս եկեղեցի գնացած կըլինի, Ուստի և առանց առանձին երկիւղի ներս մտալ. Մրտած տեսալ նախընթաց օրում գործածս աւերմունքները. Վերջապէս մտալ մեր սենեալը, Քոլրս և եղբալրներս, որոնք նոր էին վեր կենում իրանց անկողիններիցը, ուրախութեան ձախներով ինձ գրկեցին. Մալրս, որ արդէն մի արու զաւակ էր ճնել, զարմացաւ քրոջս և եղբալրներիս արարմունքների վերալ. Բանից զուրս եկաւ, որ իմ փախուստը մօրիցս թագցրած են եղել. Եւ մալրս կարծել է, որ ես նախընթաց գիշերը Մարիսաթունի տանն եմ քնել. Իմ լալտնուելով ամեն բան պարզուեց. Մալրս շատ ցաւեցաւ, որ ես Մարիսաթունի ամաները փշբել եմ և նախ քան ալդ՝ հարևան կանանցից մէկին կտուրի պատից վալր եմ գլորել, որից,—ինչպէս երեսցաւ,—կնոջ գլուխը քարի կպչելով վիրաւորուել և ալժմ հիւանդ պարկած էր և մալրս սկսել ինձ նախատել.

— «Ա՛լ զիմ, ալ սարսափի, ախր ինչի է, ինչի համար, ասում էր նա ինձ»:

— Հապա ինչի էին հաւաքուել, «որ Քեզ սպանեն—պատասխանեցի ես լալաղին ձանով, և սկսեցի պատմել իմ վախտեան և վերադարձի մանրամասնութիւնքը։ Պատմութիւնս զեռ չէր լրացած երբ սրանում հօրս հաղի ձախնը յառեց։ Մարդ իսկո՞ն ինձ իւր ծոցն առաւ և վերմակով ամբողջապէս ծածկեց։ Հալրս ներս մտնելով՝ լսեց իմ վերադարձը և... որ ինձ համար միանգամայն անսպասելի էր, ոչ միայն ինձ չըշարդեց, ալլ և ոչ իսկ նեղաց ու։ Նա միայն ալսքանս ասաւ՝ ափորձանք էր, փառք Աստուծոյ, որ անցկացաւ։ Ինչ ասել կուզի, որ հօրս ալս վարմունքը ամենքիս էլ ուրախացրեց։ Գալով Մարխաթունին հասցրած վնասին՝ քոլրս լանձն առաւ, որ նա իւր ասեղնադործութեան արդիւնքը լատկացնում է Մարխաթունին, մինչև նորա վնասի ծածկուելը։ Եղալըներո էլ լալտնեցին, որ վերաւորած հարեան կնոջ հարցը՝ արդէն իրանք հաշտութեամբ վերջացրել են նորա, նորա ամուսնու և որդուց հետ մաս առ մաս 20 րուրի վճարել խոստանալով։ Մի քանի բովէից ներս մտաւ Մարխաթունը և լալտնեց, որ ինքը հրաժարում է որևէ փոխարինութիւն ստանալ մեղանից վնասի համար։ Եւ մի քանի օրում իմ վըշրած ամանները նա կըկարկատէ, նորից կարգի կըձգէ, եթէ որ ես իմ շալակով ձօրից կրեմ իրան հարկաւորեալ կաւը և իմ ոտքերով ցկոմկռտեան, — շաղախեմ։ Ես վեր թռալ մօրս անկողնի միջից և լանձն առաւ, հէնց նոյն օրն և եթ տանել ինձ փրալ զրուած թեթև պատիմք։ Միևնույն ժամանակ Մարխաթունը և մերալինք բոլորը՝ խօսք ստացան հօրիցս, որ ինձ չպատճէ։ Եւ ալսպէս հեշտութեամբ, սիրով և խաղաղութեամբ վերջացաւ նկարագրածս դէպքը, որ, իմ նախազգացմամբ, մըրկալի հետեանք պիտի ունենար»:

||.

Իմ արած անկարգութիւնը չափաղանցութեամբ տարածուած էր քաղաքում։ Եւ մինչդեռ ես մ' քանի օր շարունակ զբաղուած էի իմ լանցանքը քաւելով, Մարխաթունի համար կաւ կրելով և շաղախելով՝ քաղաքում մարդիկ պնդում էին իրը թէ ալդ պատժին ինձ ենթարկել է «նաչալնիկը»—Պօզուեանցը։ Ակդ ձախնը վերջինիս ականջին հասնելով՝ պրիստափն լանձնարարած էր ստուգել թէ բանն ինչումն է։ Պրիստաւն էլ լուից մի ուզա շինել կամենալով՝ Մարխաթունին խօսեցրել էր և թէպէտ նա մարդկանց ներկաւութեամբ և բացարձակաբար լալտնել էր, «որ ինքը ոչ ինձանից և ոչ էլ իմ ծնողներից ոչինչ գանգատ չունի, անու ամենալի պրիստաւը անհրաժեշտ էր համարել գործին պաշտօնական ընթացք տալ, և ահա խաժամուժի ասէ կոէներին՝ մի նոր

Նիւթ ևս աւելացաւ, Խաժամուժը հաւաստիաբար պիղում էր՝
որ նաչալնիկը վճռել է ինձ ռողգով ծեծել, Բայց ի նկատի
ունենալով իմ փոքրութիւնը՝ իմ տեղակ հօրս է ծեծելու, Բայց
լետով հօրս ծերութիւնը ևս ի նկատի առնելով՝ հօրս տեղակ
եղբայրներիս պէտք է ռողջի տալ, Այս մէկ կողմից, Միւս
կողմից՝ կտուրից գլորածն հարեան կնոջ ամւախնն ու որդիքը,
հանգամանքից օգուտ քաղելով, խաղաղութեամբ և արդէն
վերջացած դործը նորից ուղում էին զարթեցնել և պաշտօ-
նական ընթացք տալ, եթէ որ վոխանակ խոստացուած 20.
րուրլուն՝ մենք 50 րուրլի չվճարենք, Եւ էլ կանխիկ վճա-
րենք, Հայրս և եղբայրներս հաւատացած էին, որ մեր հարե-
անին խելքից հանողը՝ տէր Սիմօնն է, որի ծուխն էր մեր
հարեանը,

Եւ ի լրումն այս ամենի՝ մարդիկ հաւատացած էին և
ուրիշներին էլ անսպատճառ հաւատացնել էին ուղում, որ այս
ամեն չարիքը իմ և, առ հասարակ, մեր ընտանիքը զվեխն
եկաւ Ներսէս կաթողիկոսի անէծքից, Խոկ կաթողիկոսը մեղ
իրը թէ անիծել է այս պատճառաւ, որ մենք նորա խօսքը
կոտրել ենք և ինձ էջմիածին տանելու նորա կամքին՝ հա-
կառակիւլ, Վերջին կարծիքին հակուած էր նաև մայրս,

Բնականաբար այս ամենը մեր ընտանեկան խաղաղու-
թիւնը նորից առակն ու վրալ առաւ, Եւ թէ պէտ նաչալնիկը-
մեղանից ոչ ոքին ոչ ռողդի խիեց և ոչ էլ որ և է պատիժ
տուեց, Պօղօխեան Աւստիս աղան հիմսուելով եղբարցս նախ-
իին պալմանի վրալ մինչև անդամ մեր հարեանին մեր զէմ
տուած գանդատն ևս առանց հետեանքի թողից և եղբարցս
տեղակ մեր հարեանին հասանելի 20 րուրլին ինքն իւր գըր-
պանից վճարեց, ըստ միջնորդութեան իւր կնոջը՝ կէկէլ խա-
նումին, —այսու ամենաբնիւ ալլ ևս Ախալքալակում մնալը-
մեղ համար, ինչպէս ասում են, ոչ համ ունէր և ոչ հոտ, Ցան
աւելորդ բաները հարեանների վրալ ձեռաց գաճառեցինք և
աշնան սկզբներին ճամբար ընկանք սալլով դէպի Ախալցխա-

ԵՂԻՃԵ Թ. ԳԵՂԱՄՄԵՍՆՑ